ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՄԱՆ

28 ապրիլի 1998թ. թիվ 46

ԳՈՐԾՈՂ ԳՆԵՐՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 05.02.98 թ. „Հայաստանի Հանրապետության Կառավարության 1997 թվականի մայիսի 30-ի թիվ 159 որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու եւ պետական պատվերով կառուցվող օբյեկտներում տրամադրված ֆինանսական միջոցների օգտագործման ստուգման եւ վերահսկման ենթակա հարցերի ցանկը հաստատելու մասին„ թիվ 59 որոշման 2-րդ կետի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել „Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման„ կարգը:
2. Գիտատեխնիկական ինֆորմացիոն կենտրոնին (Գ. Մաթեւոսյան) տալ լրատվություն շահագրգիռ նախարարություններին, գերատեսչություններին, կազմակերպություններին եւ համաձայն նրանց պահանջարկի ապահովել նշված կարգի հրատարակումը եւ տարածումը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել նախարարի տեղակալ պրն. Ս. Կարապետյանի վրա:

ԿԱՐԳ
ԳՈՐԾՈՂ ԳՆԵՐՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. Կիրառման բնագավառը

Սույն կարգը մշակված է կիրառելու շինարարության մասնակիցների կողմից, որոնք ընդունված կարգով ունեն իրավունք Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնելու նոր կառույցների շինարարություն, գոյություն ունեցող շենքերի եւ շինությունների վերակառուցում, վերականգնում, ընդլայնում, արդիականացում, վերանորոգում (հետագայում՝ շինարարություն):

2. Նորմատիվային վկայակոչումներ

Սույն կարգում վկայակոչված են ՀՍՏ 1.0-93 „Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային համակարգ: Հիմնական դրույթներ„:

3. Սահմանումներ

Սույն կարգում կիրառվել են տերմիններ եւ սահմանումներ ՀՍՏ 1.0-93-ին համապատասխան:

4. Ընդհանուր դրույթներ

4.1. Սույն կարգը մշակված է շինարարության մասնակիցներին նորմատիվային փաստաթղթով ապահովելու նպատակով, որի հիման վրա պետական բյուջեով ֆինանսավորվող օբյեկտներում կատարվում է գործող գներով շինարարական (շինմոնտաժային, նորոգման, թողարկման կարգաբերման) աշխատանքների արժեքի հաշվարկը հետեւյալ դեպքերում՝
- կապալառու կազմակերպության հետ բանակցությունների հիման վրա պատվերի տեղադրման.
- կատարված աշխատանքների ամենամսյա գործող գներով հաշվարկման պայմանով պատվերի տեղադրման.
- արտակարգ իրավիճակների դեպքում աշխատանքների կատարման:

4.2. Կատարվող աշխատանքների արժեքի կառուցվածքը ներկայացվում է հետեւյալ բանաձեւով՝

Ա = Ծ + Շ + Հ

որտեղ՝

Ա - արժեքն է
Ծ - ծախսերն է
Շ - շահույթն է
Հ - հարկերն է

4.3. Շինարարական աշխատանքների արժեքի մեջ մտնող ծախսերը՝ ելնելով շինարարական նորմաներից, խմբավորվում են հետեւյալ կառուցվածքով՝

$$Ծ = ՈՒ + Վ + Ա$$

որտեղ՝

Ծ - շինարարական աշխատանքների արժեքի մեջ մտնող ծախսերն են

ՈՒ - ուղղակի ծախսերն են

Ուղղակի ծախսերին են վերաբերվում անմիջապես աշխատանքի կատարման համար ծախսերը, այսինքն՝

$$ՈՒ = Ա + Ն + Մ$$

որտեղ՝

Ա - հիմնական բանվորների աշխատավարձն է եւ հատկացումներն են աշխատավարձի ֆոնդին սոցիալական ապահովագրության բոլոր տեսակներով

Ն - նյութերի, կառուցվածքների եւ պատրաստվածքների արժեքն է

Մ - շին. մեքենաների եւ մեխանիզմների շահագործման ծախսերն են

Վ - վերադիր ծախսերն են

Վերադիր ծախսերին են վերաբերվում արտադրության կազմակերպման հետ կապված ծախսերը (կառավարման ապարատի եւ գծային անձնակազմի (աշխղեկ, վարպետ, տեղամասերի պետեր եւ այլն) պահպանումը, ցածրարժեք գույքի մաշվածությունը, շենքերի եւ կառուցվածքների (ժամանակավոր եւ մշտական) ամորտիզացիան, վարձավճարը, պահպանման ծախսերը (ընթացիկ եւ կապիտալ վերանորոգման, ջրի, էլեկտրաէներգիայի, ջեռուցման, կապի եւ այլն), օժանդակ (հիմնական կազմի մեջ չմտած) բանվորների աշխատավարձը, սոցապահովման հատկացումները եւ այլ ծախսերը, որոնք հաշվի չեն առնված ուղղակի ծախսերի մեջ):

Ա - այլ ծախսերն են, որոնք հաշվի են առնում շինարարության վրա ազդող յուրահատուկ (շին. հրապարակի վայրը, շինարարական աշխատանքների կազմակերպման հետ կապված ծախսերը, կլիմայական պայմանները, շինարարական կազմակերպության յուրահատկությունները) պայմանները:

5. Գների հաշվարկումը

5.1. Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման համար, համաձայն գործող ՀՀՇՆ, ՇՆեւԿ եւ արտադրական նորմաների, կատարվում է ծախսերի ընտրանք՝ աշխատաժամանակի, մեքենաների եւ մեխանիզմների տեսակների եւ ժամանակի (հաշվի առնելով աշխատանքի պայմանների ազդեցությունը), նյութերի, պատրաստվածքների եւ կառուցվածքների պահանջարկը բնական արտահայտությամբ:

5.2. Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկները իրականացվում են ընդգրկելով հետեւյալ հոդվածները՝

- աշխատավարձ
- նյութերի արժեքը
- մեքենաների եւ մեխանիզմների շահագործման արժեքը
- վերադիր ծախսեր
- շահույթ
- այլ ծախսեր

- ավելացված արժեքի հարկ

5.2.1. Աշխատավարձի հաշվարկը

Աշխատավարձը հաշվարկվում է՝

Ա = Տ x Դ x Գ

որտեղ՝

Ա - աշխատավարձի չափն է

Տ - աշխատատարությունն է մարդ. ժամերով (որոշվում է ելնելով կատարված աշխատանքների ծավալից եւ միավոր աշխատաժամի նորմայից)

Դ - 1 ժամվա դրույքն է (որոշվում է միջին ամսական աշխատավարձը բաժանելով 173.1, միջին ամսական աշխատավարձի չափը ընդունվում է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության որոշմամբ)

Գ - սոցապահովման հատկացումների գործակիցն է

Աշխատատարության նորմաների բացակայության դեպքում աշխատավարձի չափը որոշվում է ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից սահմանվող այլ մեթոդով:

5.2.2. Նյութերի արժեքի հաշվարկը

Նյութերի արժեքը հաշվարկվում է՝

Ն = (Ն1 x Ա1 + Ն2 x Ա2 ... + Նn x Աn) x 1,05 x 1,05 x 1,02

որտեղ՝

Ն - նյութերի արժեքն է

Ն1, Ն2, Նn - նյութերի ծախսն է ըստ նորմերի

Ա - նյութերի, պատրաստվածքների եւ կառուցվածքների գներն են, ընդունվում է համաձայն գինը հիմնավորող փաստաթղթերի (հաշիվների, գների մասին ինֆորմացիոն տեղեկագրերի եւ այլն), ընդ որում կոմերցիոն կազմակերպությունների, անհատ անձանց կողմից ձեռք բերված եւ հաշվարկներում ներառված նյութերի, պատրաստվածքների եւ կառուցվածքների գները չպետք է գերազանցեն ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից թողարկվող ինֆորմացիոն տեղեկագրում բերված գներին:

1,05 - այլ նյութերի չափը հաշվի առնող գործակիցն է

1,05 - տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակիցն է

1,02 - պահեստավորման - փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակիցն է

5.2.3. Մեքենաների եւ մեխանիզմների շահագործման արժեքի հաշվարկը

Մեքենաների եւ մեխանիզմների շահագործման արժեքը հաշվարկվում է՝

Մ = (Ժ1 x Ա1 + Ժ2 x Ա2 ... + Ժn x Աn) x 1.03

որտեղ՝

Մ - Մեքենաների եւ մեխանիզմների շահագործման արժեքն է

Ժ1, Ժ2, Ժn - մեքենաների աշխատանքի ժամանակն է

Ա1, Ա2, Ա3 - 1 մեք/ժամ-ի արժեքն է (շահագործող կազմակերպության հետ պայմանագրով կամ շինարարական կազմակերպությունների պլանա - հաշվարկային գներով).

1.03 - այլ մեքենաների շահագործման արժեքը հաշվի առնող գործակից է

Մեքենաների եւ մեխանիզմների շահագործման արժեքը թույլատրվում է որոշել նաեւ ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից սահմանվող այլ մեթոդով:

5.2.4. Վերադիր ծախսերի հաշվարկը

Վերադիր ծախսերը հաշվարկվում են ուղղակի ծախսերի ընդհանուր արժեքի 5.3 տոկոսի չափով:

$$Վ = \frac{ՈՒ \times 5,3}{100}$$

5.2.5. Շահույթի չափի հաշվարկը

Շահույթը հաշվարկվում է կազմակերպության բոլոր ծախսերի հանրագումարի 10 օ/օ-ի չափով:

$$Շ = \frac{(ՈՒ + Վ) \times 10}{100}$$

5.2.6. Այլ ծախսերի հաշվարկը

Այլ ծախսերը հաշվարկվում են՝

$$Ա = Ժ + Ձ + Լ$$

որտեղ՝

Ա - այլ ծախսերն են

Ժ - ժամանակավոր պահեստային եւ կենցաղային շենքերի շինարարության (շարժական կամ հավաքովի - քանդովի շենքերի օգտագործման), ժամանակավոր ինժեներական ցանցերի մոտեցման (Էլեկտրաէներգիայի, ջրի, օբյեկտի մոտեցման ճանապարհների եւ հրապարակների եւ այլն) ծախսերն են, ընդունվում են ՀՀ Քաղաքաշինության նախարարության նորմաներով

Ձ - ձմեռային պայմաններում կատարվող աշխատանքների համար լրացուցիչ ծախսերն են, ընդունվում են ՀՀ Քաղաքաշինության նախարարության նորմաներով

Լ - ՀՀ Կառավարության (սահմանված կարգով ՀՀ կառավարման մարմնի) կողմից սահմանված այլ արտոնություններ եւ լրացուցիչ ծախսեր

5.2.7. Հարկեր

ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը հաշվարկվում են շինարարական աշխատանքների արժեքից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3. Պատվիրատուի (նախագծային ինստիտուտի) կողմից կատարված նախնական հաշվարկները ձեւակերպվում են համաձայն թիվ 1 հավելվածի (ձեւ 1,2): Կատարված աշխատանքների հաշվարկները ձեւակերպվում են համաձայն թիվ 2 հավելվածի (ձեւ 1,2):

ձեւ թիվ 1

Պատվիրատու _____
Շինարարության անվանումը եւ նրա
հասցեն _____
Օբյեկտի անվանումը _____

Հ Ա Շ Վ Ա Ր Կ
Շինարարական աշխատանքների արժեքի

_____ 19 թ.

Հ/Հ	Հիմնավոր-ում	Աշխատանքների եւ ծախսերի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Արժեքը հազ. դրամ	
					Միավորի	Ընդհանուր
1	2	3	4	5	6	7

Ընդամենը

_____ նախագծային ինստիտուտի
(Ա.Ա.Հ. պաշտոն, ստորագրություն) պատասխանատու ներկայացուցիչ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
Ձեւ թիվ 2

Պատվիրատու _____
Շինարարության անվանումը եւ նրա
հասցեն _____
Օբյեկտի անվանումը _____

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

_____ 19 թ.

Հ/Հ	Հոդվածների անվանումը	Արժեքը հազ. դրամ
1	2	3

Ընդամենը

_____ նախագծային ինստիտուտի
(Ա.Ա.Հ. պաշտոն, ստորագրություն) պատասխանատու
ներկայացուցիչ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2
Ձեւ թիվ 1

Պատվիրատու _____
Աշխատանք կատարողը _____
Պայմանագիր թիվ _____ 19 թ.
Շինարարության անվանումը եւ նրա
հասցեն _____

Օբյեկտի անվանումը _____

ՀԱՇՎԱՐԿ
Կատարված շինարարական աշխատանքների

_____ 19 թ.

Հ/Հ	Աշխատանքների եւ ծախսերի անվանումը	Աշխատանքների եւ ծախս. արժեքը	Կատարված է				
			շինարար. սկզբից	հաշվետու ժամանակ			
			o/o արժեքը	կատ. աշխ. արժեքը	o/o կատ. աշխ. արժեքը	կատ. աշխ. արժեքը	
1	2	3	4	5	6	7	

Ընդամենը

Կ.Տ. _____ հաշվարկ կատարող
(Ա.Ա.Հ. պաշտոն, ստորագրություն)

Կ.Տ. _____ հաշվարկ ընդունող
(պատվիրատուի Ա.Ա.Հ., պաշտոն, ստորագրություն)

ՀԱՇՎԱՐԿ ԹԻՎ 2
Ձեւ թիվ 2

Պատվիրատու _____
Աշխատանք կատարողը _____
Պայմանագիր թիվ _____ 199 թ.
Շինարարության անվանումը եւ նրա
հասցեն _____
Օբյեկտի անվանումը _____

Հ Ա Շ Վ Ա Ր Կ
Կատարված շինարարական աշխատանքների

_____ 199 թ.

Հ/Հ	Աշխատանքների եւ ծախսերի անվանումը	Հիմնավորում	Չափ, միավոր	Միավորի արժեքը	Կատարված է				
					Հաշվետու ժամանակաշրջանում		շինարար. սկզբից ներառելով հաշվետու ժամանակաշրջանը		
					քանակը	կատ. աշխ. արժեքը			
1	2	3	4	5	6	7	8		

Ընդամենը

Կ.Տ. _____ հաշվարկ կատարող
(Ա.Ա.Հ. պաշտոն, ստորագրություն)

Կ.Տ. _____ հաշվարկ ընդունող
(պատվիրատուի Ա.Ա.Հ. պաշտոն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ "21" 05 1998 Թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 199800129

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

15.04.98 թ. թիվ 10 - 470

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի պատասխան 18.03.98 թ. ՖՓ - 17/433 գրությամբ ներկայացված ,,Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի,, հայտնում ենք հետեւյալը.

Կարգի 5.2.1. ենթակետում ,,ընդունվում է միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի որոշմամբ,, արտահայտությունը փոխարինել ,,սահմանվում է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից,, արտահայտությամբ: